Ավետիք Իսահակյան

Երկինքն հիասքանչ, շքեղ, լուսալից

Երկինքն հիասքանչ, շքեղ, լուսալից,
Հոգիս արթնացուց լռության երգով.
Եվ այս տաղտուկից, կյանքի անձուկից
Թափ առավ հոգիս երազ – թևերով:

Եվ տիեզերական խորությունների
Անճառ վայրերում հոգիս սավառնեց.
Եվ խորախորհուրդ, վեհ գաղտնիքների
Անխոս բարբառին լուռ ունկընդրեց:

Եվ տեսավ նրա ափերը անծիր,
Անսահմանության սարսափն ահավոր.
Աստղի քարվաններ, բույլեր ցանուցիր,
Ուժերի հախուռն հորձանքը հզոր:

Եվ երկյուղագին հոգիս հաղորդվեց
Հավիտենության խոհերին վրսեմ,
Անմահ էության հալվեց ու ձուլվեց,
Ինչպես մի հընչյուն, հյուլե մի նրսեմ …

1904
Թիֆլիս